



Դասախոսների վերապատրաստման դասընթացի ծրագիր

ԲՈՒՆ-ի անվանումը	Երևանի պետական համալսարան
Վերապատրաստման դասընթացի անվանումը	Ակտիվ ուսուցման արդի բովանդակությունն ու գործնական իրականացման ուղիները
Վերապատրաստող (ներ)ի անուն(ներ)ը Ֆակուլտետը և ամբիոնը Պաշտոնը Էլ. հասցեն Հեռախոսահամարը	Տիգրան Սարգսյան Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ, Մերվիսի ամբիոն Դոցենտ, աշխարհագրական գիտություններին թեկնածու tigran.sargsyan@ysu.am (091) 375-671
Հանդիպման օրերը և ժամերը Վայրը/լսարան(ներ)ը	2019թ. փետրվարի 27, 28, մարտի 1, 4, 5 (ընդհանուր՝ 5 օր) 9-10 ժամ, 16:00 419 լսարան, Աշխարհագրության և երկրաբանության ֆակ.
Ուսումնական բեռնվածությունը	10 ժամ լսարանային աշխատանք (5 օր x 2 ժամ), 20 ժամ անհատական աշխատանք
Դասընթացի նպատակը	Մասնակիցներին գիտելիքներ ու գործնական հմտություններ հաղորդել բարձրագույն կրթության համակարգում ակտիվ ուսուցման արդի բովանդակության, կազմակերպչական ձևերի ու ուղիների վերաբերյալ՝ մասնագիտական գործունեության մեջ դրանց առավելագույն կիրառության ապահովման նպատակով:
Կրթական վերջնարդյունքները (ԿՎ)	Վերապատրաստման դասընթացի հաջող ավարտին մասնակիցներն ունակ կլինեն. <u>Տեսական առումով՝</u> 1. Հստակորեն տարանջատելու ուսուցման ակտիվ և ոչ ակտիվ՝ «պասսիվ» ձևերը, ուրվագծելու ակտիվ ուսուցման բովանդակային և կազմակերպչական շրջանակը (framework), 2. Վերանայելու և լրամշակելու եղած առարկայական ծրագրերը՝ ակտիվ ուսուցման դրույթներին դրանց համապատասխանության ապահովման նպատակով, <u>Գործնական առումով՝</u> 3. Լսարանային և արտալսարանային պայմաններում կիրառելու ակտիվ ուսուցման տարբեր եղանակները, մոտեցումներն ու հնարները, ըստ այդմ՝ ապահովելու դասավանդման

	<p>գործընթացի ակտիվ բնույթը,</p> <p>4. <i>Խթանելու</i> սովորողների ակտիվ և ստեղծագործ ներգրավվածությունն ուսումնառության գործընթացին:</p>
Դասընթացի մեթոդաբանությունը/ դասավանդման ձևերը	<ul style="list-style-type: none"> • Խմբային աշխատանքներ և քննարկումներ • Լսարանային ցուցադրություններ՝ խմբային կամ անհատական ձևաչափով • Առցանց աշխատանքներ և առաջադրանքների կատարում • Օրինակների վերլուծություն (case study), լավագույն փորձի (best practice) քննարկում • Մտազրոհ, խթանող տարբեր մոտեցումների կիրառություն (ice-breaking, energizer) • Հակիրճ-թիրախային դասախոսություններ
Առաջարկվող ուսումնական նյութերը	<p>Անհրաժեշտ բոլոր առցանց ռեսուրսներին կարելի է ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ https://sites.google.com/view/printel-kul/syllabus?authuser=0</p> <p>Դասընթացին հաջող մասնակցության նախապայմաններից է վերը նշված ռեսուրսների հիմնական բովանդակության վերաբերյալ առնվազն ընդհանուր մակարդակով պատկերացում կազմելը՝ նախքան դասընթացի սկիզբը:</p>
Հիմնական տեխնիկական/մեդիա պահանջները	<ol style="list-style-type: none"> 1. Էլ. գրատախտակ/SMART board 2. Պրոյեկտոր 3. Անլար ինտերնետի հասանելիություն 4. Ֆլիպչարտ և գունավոր մարկերներ 5. Գունավոր կպչուն թղթեր 6. A4 չափի սպիտակ թղթեր և գրիչներ 7. Մասնակիցների պարագայում՝ սմարթֆոնների առկայություն
Որակի ապահովումը	<p>Ընթացիկ (օրեկան կտրվածքով) և ամփոփիչ (դասընթացի ավարտին) հարցումներ՝ բանավոր հարցադրումների և նախօրոք մշակված հարցաթերթիկների (առցանց) կիրառմամբ</p>

Դասընթացի ընդհանրական պատկերը/ բովանդակությունը

Վերապատրաստման օրերը	Հիմնական թեմաները	Ուսումնառման գործողությունները	Հանձնարարությունները
<p>1-ին օր</p> <p>27.02.2019</p> <p>9-10 ժամ, 16:00-ից</p> <p>419 լսարան</p>	<ul style="list-style-type: none"> • Դասընթացի նըպատակի ու խնդիրների հակիրճ ներկայացում • Ակտիվ ուսուցման (ԱՌԻ) էությունը: ԱՌԻ-ն՝ որ- 	<ul style="list-style-type: none"> • Ցուցադրություն-դասախոսություն, • Մտազրոհ, խմբային քննարկումներ և արդյունքների ամփոփում • Վարժություն՝ ԱՌԻ 	<ul style="list-style-type: none"> • Առնվազն ընդհանուր մակարդակով՝ ծանոթացում ակտիվ ուսուցման և դրա արդի բովանդակության վերաբերյալ առցանց աղբ-

	<p>պես ժամանակի հրամայական և «ընդդեմ» պասսիվ ուսուցման</p> <ul style="list-style-type: none"> • ԵՊՀ-ում ԱՌԻ կազմակերպման արդի վիճակը 	<p>կոնցեպտուալ շրջանակի մշակում՝ mindmapping առցանց ծրագրերի կիրառությամբ (ցանկալի է):</p>	<p>յուրներին</p> <ul style="list-style-type: none"> • Դասընթացի վերջնարդյունքային հանձնարարության պարզաբանում: Առաջարկվում է վերանայել եղած 2 առարկայական ծրագիր՝ ակտիվ ուսուցման պահանջներին դրանց համապատասխանության ապահովման առումով: Որպես այլընտրանք՝ 2 նոր ծրագրի կազմում:
<p>2-րդ օր 28.02.2019 9-10 ժամ, 16:00-ից 419 լսարան</p>	<ul style="list-style-type: none"> • Վերլուծական մոդելների կիրառումը ինչպես ԱՌԻ, այնպես էլ կրթական ու առարկայական ծրագրերի, կրթական վերջնարդյունքների մշակման համատեքստում. ADDIE (<i>Analysis-Design-Development-Implementation-Evaluation</i>), SMART (<i>Specific-Measurable-Assignable-Realistic-Time related</i>), TPACK (<i>Technological-Pedagogical-Content-Knowledge</i>) 	<ul style="list-style-type: none"> • Ցուցադրություն-դասախոսություն, • Խմբային ազատ քննարկումներ, • Կոնկրետ օրինակների և փորձի վերլուծություն • TPACK վարժություն: Ըստ առանձին թեմատիկ ուղղությունների՝ բովանդակության, գիտելիքների, տեխնոլոգիաների և մանկավարժական մոտեցումների որոշում, արդյունքների ամփոփում 	<ul style="list-style-type: none"> • Վերլուծական մոդելների և ԱՌԻ գործընթացում դրանց կիրառության ուղիների վերաբերյալ առցանց ադյուրների ուսումնասիրություն • Հետադարձ՝ վերջնարդյունքային առաջադրանքին
<p>3-րդ օր 01.03.2019 9-10 ժամ, 16:00-ից 419 լսարան</p>	<ul style="list-style-type: none"> • Խմբային աշխատանքները, դրանց դերն ու կազմակերպումը ԱՌԻ գործընթացում 	<ul style="list-style-type: none"> • Քննարկում՝ խմբային աշխատանքների անցկացման մոտեցումները, արդյունավետությունը: • Ծանոթացում խմբային աշխատանք- 	<ul style="list-style-type: none"> • Դիտարկում՝ ԵՊՀ և հարակից տարածքի օգտագործումն ուսումնական նյութերի պատրաստման նպատակով • Պրոբլեմային որևէ

		ների կազմակերպման World Café, Scavenger Hunt մեթոդներին, SWOT վերլուծության մեթոդին	հարցի առնչությամբ SWOT վերլուծության կազմում • Հետադարձ վերջնարդյունքային առաջադրանքին
<p>4-րդ օր 04.03.2019 9-10 ժամ, 16:00-ից 419 լսարան</p>	<ul style="list-style-type: none"> • ՏՀՏ որոշ մոտեցումների կիրառությունն ԱՌԻ գործընթացում: Առցանց կրթության և ակադեմիական հաղորդակցության Moodle հարթակը 	<ul style="list-style-type: none"> • Mentimeter մասնակցիների դիրքորոշման պարզաբանման թեստային մեթոդի կիրառում: Օրինակ, ակտիվ ուսուցման և դրա իրականացման եղանակների ու ասպեկտների վերաբերյալ • https://e-learning.yzu.am/ կայքի ներկայացում, դրա ընձեռած հնարավորությունների ցուցադրություն, մասնակիցների գրանցում 	<ul style="list-style-type: none"> • Նախօրոք գրանցում www.menti.com կայքում • Նախնական ծանոթացում https://e-learning.yzu.am/ կայքին • Հետադարձ վերջնարդյունքային առաջադրանքին
<p>5-րդ օր 05.03.2019 9-10 ժամ, 16:00-ից 419 լսարան</p>	<ul style="list-style-type: none"> • Գործնական արդյունքներ և ամփոփում 	<ul style="list-style-type: none"> • Խմբային աշխատանք (2 խումբ)՝ նախօրոք հանձնարարված վերջնարդյունքային առաջադրանքի ամփոփում • Արդյունքների ներկայացում և քննարկում 	<ul style="list-style-type: none"> • Վերափոխված խմբագրված ծրագրի գործնական կիրառություն և հետադարձ կապ